

առաջին: Շատ անգամ միմյանից փնտրել ան-
տանիքի է դառնում փոքրիկների համար. պատա-
հում են դեպքեր, երբ նրանք միմյանում են,
խորհուրդ են անում, ինչպես կրթվել միմյանը.
վճարում են զանազան կախիկ ուղղի կատուների
չլինելից, որպեսզի գիտենան իրանց մասն
չը դառնա: Բայց դուք գիտե՞ք, թե որքան և
որքան դժուար բան էր միմյանի համար զան-
գակը կախիկ կատուների վրիճ: Ձր կարողացան
խեղճերը. միմյանի բնավորությունը երբ է այդ-
քան քաջագործություն ցույց տուել: Միմյանի
խորհուրդը չարժանավորում է այսօր էլ միայն
փրկարար, զանգար էլ գնված է, բայց ամ-
բողջ ցանկ այն է, որ այդ զանգարը այժմ էլ
ընկած է մի անկիւնում:

Ճիշդ այս դրուժնիկն էլ տիրում է Բագուի
հաւթարդիւնաբերողների ժողովում: Նախապէս
հինգ-տասը խոշոր կատուներ անում են այն,
ինչ հաճելի է իրանց: Միմյանը դատաւարութիւն
են լուծեցան. բաւական է, որ կատուներից
մէկը միայն մի հայեացք գցէ նրանց վրա,—
ուրիշ բան հարկաւոր չէ, ոչ ձայն ու ծպուտ,
ոչ չարժուածք, միայն մի հայեացք բաւական է
ան ու սարսափի մէջ խեղդելու բոլոր միմյան-
րին: Եւ այսպիսի հանգամանքների մէջ շահերի
ընդհարում: Մի ամբողջ արագեղիս է սա
Շատ անգամ ենք նկատել այս ողբերգությունը
«Մակի» մէջ: Բայց անս «Ճագը» լրագիրը նո-
րից շատ վաղ գոյնեցում նկատում է նոյն պատ-
կերը: Մենք կը բերենք այդ գոյներից մի քա-
նիստ:

Վաղը հաւթարդիւնաբերողների ժողովը
բաց է անում իր նիստերը: Նրա առջև կը
կանգնէ հաւթարդիւնաբերողների խորհուրդը
կամ աւելի ճիշդ կը լինէր ասել—Պ. Օ. Ղու-
կասովը և կը սկսէ հաշիւ տալ անցեալ տար-
վայ իր գործունէութեան մասին: Եւ սար-
սափ զգուշ չիմք չունի: Նա: Ուստից պիտի
վարկենայ: Համարձակ և հպարտ կը կանգնէ
նա ամբողջ ժողովի առաջ և յանդուգն փայտը
բերանին նշոյն իսկ չի արդարանայ իր գոր-
ծած մեղքերի համար:

—Այո, ես այդ արեւ եմ: Կարելի էր ա-
ւելի լաւ էլ անել: Լաւ, յետոյ ինչ: Ինչ էք
կամենում:

Եւ անգործ ժողովը կը լռէ, որովհետեւ ինչ
կարող է անել:

Ասում են, թէ ամեն բանի մէջ մեղաւորը
«ցնցն» է: Դրանից է, որ անգործ է ժողովը:

Ճիշդ այն է, որ խոշոր հաւթարդիւնները
ժողովում աւելի շատ ձայն ունենա Որքան մի
Ֆիրմա շատ է հաւթարդիւն, նա այնքան էլ
շատ ձայն ունի: Եւ անս, ասում են, այդ խո-
շորները իրանց բազմաթիւ ձայներով խեղճում
են փոքրերին:

Ես—չարունակում է յօդուածագիրը—թող

մշակած պատերազմները: XIX-րդ դարի ըն-
թացքում եղել են 28 պատերազմ, ուրեմն
դուրս գալով այդ երկու պատերազմը, մնացած
26-ը մղվել են նուաճողական, յափշտակողա-
կան նպատակով եւ զանազան Նապոլեոնների,
Բիսմարկների, Մոլոտովների կապիղի եւ բըռ-
նապետական ձգտումների պատճառով:

Որպէսզի գիտնալիս չը վերադառնանք այդ
հարցին, եւ ամփոփ կերպով լուսարանենք
պատերազմների ու զինավորումների խաղաղութեան
ժամանակակից լինելի ամբողջ սարսափը, ես
պէտք է բացատրեմ, թէ ինչ կը լինէին հետե-
ւանքները, եթէ այսօր մի ընդհանուր եւրո-
պական պատերազմ ծագէր: Այդ հարցը շատ
երկար են մանրադնել կերպով ուսումնասիրել
է հանդուգնագիտ Ժան Բյոլը գիտնականը, որ
խաղաղաբարկական չարժան ջերմաստիճանը կու-
սակցիցներից մէկն էր եւ անցեալ տարի վախ-
ճանկից վարչապետը:

Ենթադրենք, ինչպէս եւ հուանական է, որ
պատերազմ ծագէ երեքպետեան եւ երկպե-
տեան դաշնակցութիւնների մէջ, այսինքն մի
կողմից Գերմանիայի, Աւստրիայի, Իտալիայի
եւ միւս կողմից Ժըմանիայի, Ռուսաստանի
մէջ: Ենթադրենք, որ պատերազմը տեւէ մի-
այն մի տարի: Արդ, Բյոլը հաշիւ է, որ երեք-
պետեան դաշնակցութիւնը պէտք է ծախէ
21,96,038,000 ֆրանկ, իսկ երկպետեան դաշ-
նակցութիւնը—22,483,437,000 ֆրանկ, ուրեմն
ընդամենը մօտ 44 միլիարդ ֆրանկ: Եւ աս-
կայն մենք գիտենք, որ այդ հինգ մեծ պետու-
թիւնների սովորական տարեկան եկամուտը
13½ միլիարդ է կազմում, ուրեմն մնացածը
որտեղից պէտք է վեր առնեն, ինչ աղբիւրնե-
րից պէտք է ծախեն, մասնաւորապէս որ ճգնա-
ժամը ծագելուց այդ երկրներին վարկը եւ
կրնկնէ եւ նրանք չեն կարող փոխառութիւն-
ներ կնքել: Պարզ է, որ երկրների ոյժերը,
միջոցները պէտք է սպառվեն եւ Եւրոպայում
պէտք է տեւէ ընդհանուր աղքատութիւն, որի
ծաւալը գուցակէլ անգամ անհասարկ է: Միայն
Ժըմանիան մի տարվայ ընթացքում պէտք է

կը տամ ինձ չը համաձայնվել այդ բանի
հետ: Գոյութիւն ունեցող ցէպը, անկասկած,
բարեկամող հանգամանքներ է ստեղծում խո-
շոր ֆիրմաների համար: Սա ճիշդ է: Բայց
բոլոր պատճառը սա չէ: Որքան էլ ինչպիսի-
կան կերպով մշակվի ցէպը հարցը, բայց երբ
չը կան համարձակ, եռանդոտ, հասկացող
մարդիկ,—այդ տեսակ ինչպիսիան ցէպով
էլ ոչինչ չէ կարելի անել: Ինչ անէ ցէպը,
երբ ժողովի անդամների մեծամասնութիւնը
այնքան վախկոտ և ճնշված է, որ բաւական
է պ. Ղուկասովը կամ պ. Ֆելզլի մի ծուռ
հայեացքը, որ ժողովը սրտաւառ դառնայ:

Եւ յօդուածագիրը բերում է փաստեր.
փաստեր, որոնք այնքան ծիծաղելի կը լինէին,
եթէ այն աստիճան տխուր ու ցաւալի չը լի-
նէին միմյանի և կատուների յարաբերութիւն-
ներն ու բնավորութիւնը որոշելու տեսակետից:
Դժբախտ հոգիներ են նստած: Նրանցից ամեն
մէկը մի մի բանակալ է իր տանը, իրանից
փոքրիկ, խեղճերի հետ. բայց այստեղ, ինչ-
պէս է ամեն տեղ, նա մի Ղուկասովի, մի
Ֆելզլի կամ մի ուրիշ աղբիւր խոշոր ստրուկն
է, պատրաստ է լիզել նրա գարշապարները,
պատրաստ է վեց անգամ մէջքից ծովել նրա
առջև, նրա մի հատ բարեհաճ ծափտը իր վրա
գրաւելու համար: Ինչպէս—Որովհետեւ հաւթար-
դին կատուներից իւրաքանչիւրը կարող է ա-
մեն ժամանակ ձգել ու ձգել այդ թշուառ
միմյանին:

Անս այդպիսի դրուժնիկն մէջ հաւթարդիւ-
նաբերողների ժողովը իր բոլոր գրաւական մի-
ջոցները, իր բոլոր գործերը յանձնում է խո-
շորներին, որոնք ընտրվում են ամեն տարի,
որոնք տոնական ժառանգութիւն են դարձնել
այդ հիմնարկութիւնը և անում են, ինչ ու-
զում են, ոչ ամաչելու, ոչ վախկոտ առիթ չու-
նեն, իրանց շահերն են պաշտպանում, իսկ
մնացածի վրա վաղուց են թքել:

Բայց քարը դրանց գլուխը, թէ կատուների
և թէ միմյանի վերջիններս էլ խեղճալու հիմք
չունենք. կատուների առաջ ստրուկ, սրանք,
մի և նոյն է, իրանց բարեբախտութիւնը կը
ստեղծեն իրանց բանտերներին և գործակա-
տարներին հարստահարելով: Ամենից ցաւալին
այն է, որ խորհրդի աղա-անդամները չեն բա-
րեհաճում փոքր ինչ ուղադրութիւն նուիրել
այն գործին, որի համար ամեն տարի ընտր-
վում են մեծ հաճութեամբ: «Ճագը» լրագիրը
բերում է մի շարք ապացոյցներ: Բաւական է
միայն նայել հաւթարդիւնաբերողների հիւան-
դանոցին, ուր աղքատ դասակարգն է բժշկվում:
Ինչ քրտմանի կարգեր, ինչ անուշագործիւն:

Պ. Թադիստովը, խորհրդի այն անդամը,
որ հակում է հիւանդանոցների վրա, գտնէ

ծախէ 11 միլիարդ ֆրանկ, մինչ ֆրանսիա-
ցիների ամբողջ արտադրութիւնը կամ աշխա-
տութեան ընդունակութիւնը գնահատվում է
26 միլիարդ, և այդ խաղաղութեան ժամանակ,
իսկ պատերազմի ժամանակ ու պէտք է ար-
տադրէ, քանի որ արտադրողներ, մշակներ չեն
լինել: Այդ պատճառով շատ իրաւացի են են-
թադրում, որ ապագայ պատերազմները կը լի-
նեն միայն անօրինակ հեկտարներ եւ կը վեր-
ջանան կուռ կողմերի մէկի, կամ ամենքի
վախճանական քայքայմամբ: Միւս կողմից, ու-
րովհետեւ զինուորական ծառայութիւնը կը լի-
նի ընդհանուր եւ զենք կրելու ընդունակ բո-
լոր մարդիկ, մինչեւ 45 տարեկանը, կը գնան
պատերազմելու, ուրեմն խաղաղութիւնը, գրա-
ւանակները, գործարանները կը փակվեն և
դաշտերը կը մնան անմշակ: Երկու կողմից եւ
կը լինի անմիջական, ընդհանուր կործանում,
եւ յաջորդ տարին սով կը տիրէ: Իսկ եթէ
պատերազմը չարժանակի մի տարուց աւելի,
ո՛հ, այն ժամանակ, անկարելի է նոյն իսկ երե-
ւակայել, թէ ինչ առաջ կը գալ Եւրոպայում
եւ նոյն իսկ ասարսիկի էլ և ամառից այդ ժա-
մին: Յամենայն դէպ յաջորդ կը յաղթէ ոչ
թէ զենքով, այլ ֆինանսներով, որովհետեւ
այժմեան տեխնիկական կատարելագործու-
թիւնների պատճառով պատերազմի բախտը
վճռել կարող են ոչ թէ զօրքերը, այլ ֆինանս-
ները: Այժմ հասկանալի է, թէ ինչու եւրոպա-
կան պետութիւնները ամեն կերպ աշխատում
են խոյն տալ պատերազմից, որովհետեւ շատ
լաւ գիտեն, որ այդ պատերազմը կը վերջանայ
կուռիների կամ մէկի, կամ ամենքի կատարեալ
կործանմամբ եւ կորստով. եթէ նոյն իսկ կըռ-
ւողներից մէկը յաղթող հանդիսանայ, դարձեալ
սարսափելի գոհնը որպէս է տայ:

Միւս կողմից, որպէսզի գիտնալիս կազմ
պատրաստ լինեն թշնամու յանկարծական յար-
ձակման դէպք, պետութիւնները սաստիկ սպա-
նազնւում են, թէն զգում են, որ միջազգա-
յին անխիստութեան վերջ դնելը անհրաժեշտ
է, որովհետեւ այդ անխիստութիւնը սպառ-

մի անգամ չէ մտել հիւանդանոցները, իսկ
թէ մտել էլ է, դա աւելի վաղ նրա համար,
որովհետեւ այն դէպքում արդէն անհոգու-
թիւն չէ, աղապարհութիւն չէ, այլ մի ուրիշ բան,
որ աւելի ամօթալի է հասարակական գոր-
ծիչի համար:

Բուրժուական այն հիմնարկութեան մէջ,
ինչպիսին է հաւթարդիւնաբերողների խոր-
հուրդը, փոքր ու խեղճ ծառայողները զրկված
են, ապրում են սարսափելի պայմանների մէջ,
մինչդեռ մեծերը, «զենեարանները» ստանում են
միջնաստրական ուժեղներ եւ շատ լաւ են ապ-
րում:

Ինչ երբ կայ: Լրագիրն ասում է, որ չը կայ
հասարակական կրթական, ժողովի մէջ ընդդի-
մադիր կուսակցութիւն չը կայ: Դա շատ և
շատ ճիշտ է: Ամենքը համարում են իրիտի-
կան, զինագործիւնը աւելորդ բան: Ի հարկէ,
դա լոգիկական դատողութիւն է այնտեղ, ուր
սողուններ են ապրում: Մեր կողմից կասենք,
որ երբ այդպէս է, երբ միմյանը երբեք չեն
կարող իրանց վախկոտութիւնից բարձր որ և է
գործ կատարել, մնում է որ անկաշառ, ազնիւ
մամուլը հրապարակ գալ իրեւ պատճող ոյժ,
իբրև անողորմ ամբօն, որի առաջ նոյն իսկ
հաւթարդին խոշոր կատուներն էլ անգոր
են: Թող այդ տեսակ մամուլը կատարէ իր անագին
դերը, և յանցաւորները, յուսով ենք, կը պատ-
վեն հասարակական դատաստանի առաջ...

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Պետերբուրգի հիմնարկութեան 200-ամեայ
տարեդարձը նշանաւոր կացուցանելու նպատա-
կով, մայրաքաղաքի բոլոր տեսարանները
մտադիր են հիմնել մի բարձրագոյն տեխնի-
կական ուսումնարան, որտեղ պատրաստվէին
զանազան տեսակ գործարանների կառավարիչ-
ներ:

Մեզ հաղորդում են, որ հանգուցեալ Խորէն
Եպիսկոպոս Ստեփանէի կողմը պէտք է գե-
կուցվի նախնադական դատարանում ներկայ
գեկտեմբերի 20-ին հաստատութեան համար:

Վրաստանի էկզարխ Ալեքսի արքեպիսկոպո-
սի կարգադրութեամբ Թիֆլիսի ուսուցչական
հոգեւորականութիւնը շուտով կը սկսէ ցուցա-
կագրութեան ենթարկել Թիֆլիսում ապրող
ուսուցչականներին եկեղեցական ծուխեր կազ-
մակերպելու նպատակով:

Առաջիկայ 1903 թվականի փետրվարի 2-ից,
«Кавказ» լրագրի ասելով, Թիֆլիսի վրաց

նում է անօրինակ աղէտներ արեւելութեան,
այդ է պատճառը, որ ուսուցչ Նիկոլայ II Կայս-
րի հրաւերը կրճատել պատկազմութիւնները,
հանգին ոգեւորութեամբ ընդունվեց ամբողջ
քաղաքակիրթ աշխարհի կողմից, թէեւ, դժ-
բաղդաբար, զինավորութեան գաղափարը չի-
րագործվեց:

Անգլիայի անարդար կռիւր բռնների դէմ
նստեց նախ 2½ միլիարդ ֆրանկ, եթէ ոչ
աւելի: Այդ փողերով, սօցիալօգ Նովիկովի ա-
րած հաշիւ համեմատ, կարելի կը լինէր չինել
մի մեծ երկաթուղային գիծ, սկսած Բուդա-
պէստից, որ անցնէր հարաւային Ռուսաստա-
նից, Դրինից, կտրէր Կերչի նեղուցը տունե-
րով, անցնէր կովկասեան ասիերով, Թիֆլիսով,
Թէրքմանով և գնար հասնէր մինչև Պարսից
ծոցը: Ենթոյն մի այդպիսի գիծ, տարածու-
թիւնը կալիպիսի և Լոնդոնի մէջ կարելի կը
լինէր անցնել 6 օրում, իսկ տարածութիւնը
Թիֆլիսի և Պարսիցի մէջ 3 օրում: Կովկասը,
որ երկարացնի ամենահարուստ աշխարհից
մէկն է, և այժմ ներկայացնում է գրեթէ ան-
չլրջի անապատ, այդ ժամանակ կը դառնար
մարդկային մի աշխատասէր մրջնանոց, լի
և եռուն գործունէութեամբ: Նոյնը կը լինէին
և Պարսկաստանը, Աֆղանիստանը, մի խօս-
քով, ամբողջ առաջաւոր Ասիան կարող էր
մասնակցել եւրոպական կեանքին և արթնա-
նալ իր բազմադարեան ջոխից: Սա միայն մի
օրինակ է: Անս մի քանի օրինակ և, ըստ
նոյն Նովիկովի:

Կովկասը այսօր 6000,000 բնակիչ ունի, բայց
նա մի ժամանակ, մոնղոլների արշաւանքից ա-
ռաջ, կերակրում էր 17,000,000 բնակիչ: Նորհիւ-
ր ունեցած հոյակապ ջրաբաշխական կամ ու-
նեցած անտեմի, որ կործանված է այսօր:
Հաշիւ են, որ հին ջրանցքների վերանորոգու-
թեան համար հարկաւոր է 1½ միլիարդ
ֆրանկ: Ռուսաստանում միայն 24,000 տար-
րական դպրոցներ կան և 1,263,000 ուսու-
նողներ, բայց բոլոր երեխաների ուսումն
ապահովելու համար հարկաւոր է ունենալ

աղւակականութեան թատրոնում կը սկսվեն
ուսու առաջնակարգ դերասանուհի Կոմիսար-
ժեկովայի ներկայացումները: Թատրոնն ար-
դէն վարձված է դերասանուհուց եւ գրաւա-
կանն ուղարկված: Կոմիսարժեկովայա կը գալ
իր խմբի հետ, որին մասնակցում են յայտնի
դերասաններ եւ դերասանուհիներ: Սաբուրովի
ղեկավարութեամբ: Խոմբը մտադիր է տալ
ընդամենը 17 ներկայացում:

«Рыб. Баз.» լրագրին հաղորդում են Պե-
տերբուրգից, թէ ուսական առեւտրին եւ ար-
դիւնակութեանը նպաստող ընկերութեան
մէջ կազմված այն մասնաժողովը, որ քննում
էր բանտերներին ապահովագրելու հարցը, մի
վճիռ կապարեց, որով ապահովագրութիւնը
ընդհանուր եւ պարտաւորական է համարում
բոլոր բանտերների համար:

Իւրեմի համալսարանը պրիվատ-գօցէնտ Ֆե-
դօրով նշանակված է Թիֆլիսի բուսանիկական
այգու բուսաբան:

Երկրագործութեան եւ պետական կալուած-
ների միջնաստրութիւնը մշակել է մի կանօնա-
դրութիւն գիւղատնտեսական տեղեկատու-կո-
միտիներական բիւրօների մասին, որոնք պէտք
է հիմնվեն գիւղատնտեսական ընկերութիւննե-
րի մէջ: Բիւրօների նպատակն է նպաստել
գիւղատնտեսական ձեռնարկութիւնների կանո-
նաւոր կազմակերպութեան եւ լինել միջնորդ
գիւղատնտեսների եւ տնայնագործների մէջ:
Նրանց ապահովելու վաճառելու համար:

Մենք ստացանք իշխանուհի Մ. Թուսնեան-
ցի կաղած և հրատարակած «Մանկական լո-
տո», թուաբանական խնդիրներով: Դա մի սի-
րուն ժամանց է հայ մանուկների համար, որի
միջոցով նրանք լուծում են ոչ միայն փոքր
թուաբանական խնդիրներ, այլ և սովորում են
հայոց լեզուը: Խաղի համար ստանձին փոքր
հրաշանք կայ: Պատկերները պատրաստված են
արտասանման եւ բաւական գեղեցիկ են, այդ
պատճառով էլ, երեխ, գինը նշանակված է մի
րուրի: Տօն օրերին մանուկներին տալու յար-
մար և լաւ նուէր կարող է լինել:

Երեքշաբթի, գեկտեմբերի 4-ին, Թիֆլիսի
արտադրական թատրոնում ի նպատակ տաղան-
դաւոր դերասան Սմիլնովի ներկայացուցեց Պե-
տակնիօի «Ученик» (Ստաւներ) պիեսը, որի
մէջ Սմիլնով կատարեց մեծ հմտութեամբ և
220,000 տարրական դպրոցներ, որոնց մէջ
կարող էին ուսումնա առնել 22 միլիոն երեխա-
ներ: Եթէ ամեն մի դպրոցի պահպանութիւնը
հաշուել 25,000 ֆրանկ, պէտք է ունենալ 4
միլիարդ և 900 միլիոն ֆրանկ:

Եթէ Մէքսիկայից մի գիծ տանենք մինչև
Ռուսիոս-Ալյէս, երկարացնի մի քանի ամենա-
արագաւոր երկիրներով, ոչոնք գեո փակ են
քաղաքակիրթութեան համար, այդ գիծը կը
նստէր 3 միլիարդ ֆրանկ և կը բանար կուռ-
տուրայի համար 10,000 կիլոմէտր հող:

Եւ բոլոր այդ հսկայական ձեռնարկութիւն-
ները, այսինքն ամերիկական գծերը, եւրոպա-
կան—ասիական գիծը, Կովկասի ոռոգումը, որ
հնարաւորութիւն կը տար 11 միլիոն նոր աղ-
գանակութիւն աւելացնել, 220,000 դպրոց-
ների հաստատութիւնը, որոնք հնարաւորու-
թիւն կը տային տարածել գրագիտութիւնը
Ռուսաստանում, որտեղ ամեն մի հարիւր ըկ-
րուտի վրա ընկնում է 62 անգրագէտ,—այլ
ամենը հնարաւոր կը լինէր իրագործել 8 մի-
լիարդ ֆրանկ գրամով, այսինքն մի գուժա-
րով, որ աւելի քիչ է քան Եւրոպայի տարեկան
պատերազմական ծախքերի գումարը:

Վերադառնալով պատերազմի, հարկերը կը պա-
կասեն, կը դադարեն մարդկային կոտորած-
ները, արմատախիլ կը լինի այն հրէշաւոր
հասկացողութիւնը, թէ «la force prime le
droit»—ոյժը զնուէր է իրաւունքը, կը դադա-
րեն աղքատութիւնը, խեղճութիւնը, սովը, ու-
րովհետեւ այն անագին միլիարդները, որոնք
այսօր սպառվում են բոլորովին ապարդիւն
ծախքերի համար, կը գործադրվեն բարձրաց-
նելու, զարգացնելու, բարեաւելու ժողովրդա-
կան կրթութիւնը, գիւղատնտեսութիւնը, ար-
դիւնաբերութիւնը, ծաղկեցնելու անապատ-
ները: Վերջապէս, 5,000,000 երկուսուրդ ոչ-
ժեր ամեն տարի անձնատուր կը լինեն ար-
դիւնաբերող աշխատութեան և գրանով կանց-
նեն ազգային հարստութիւնը:

Հ. Առաքելեան

15